

լըռումն տալ կարողանալու: Աս լիովին հաշ-
տուեցաւ եղբօր հետ, նորա զաւակներէն
մէկը իր մօտ բերաւ, օրինաւոր կրթեց և
վերջը ամենայն տեսակ տպարանական գոր-
ծիք ու նիւթեր ընծայեց, որ ուրիշ տեղ
գնայ ու ջոկ տպարան մը հաստատէ: Եւք
գիտենք, որ նա Աւերօնի անուամբ ընդու-
նած գումարին բուռն արկած էր ցանկա-
լով օգնել նեղեալ բարեկամներուն, որք
յետոյ սեւերես ապերախտներ դուրս ելան:
«Աս վճարեց Աւերօնին բոլոր գումարը տո-
կոսեօք հանդերձ: Աւերջապէս օրիորդ Բի-
դի վիճակն ևս երկար ժամանակ նորա սիր-
տը կը ծմէր: Բնթերցողս կը յիշէ, որ Բիդ
գինքը Ֆրանկլինէն բացընկեցիկ համարե-
լով, ուրիշ մարդու ամուսնացած էր, այդ
ամուսնութիւնը չարաբաստիկ եղաւ:
Մարդը գինարբուներէն մէկն էր. վերջը
յերեւան ելաւ, որ նա սահմանէն դուրս
պսակուած էր և այն տեղ ևս տակաւին
կենդանի ամուսին ունէր: Օր մը նա փա-
խաւ Ֆիլադելֆիայէն շատ պարտքեր թող-
նելով և այնուհետեւ մեռաւ: Խեղճուկ
Բիդը դառն վշտի մէջ էր. «Միշտ տրտում
էր և առանձնութիւն կորոնէր», կրէ
Ֆրանկլին: «Առաջուայ սխալս կրկին ուղ-
ղելով — կը շարունակէ Ֆրանկլին — ես ա-
ռաջարկեցի նորան իմ ձեռքս և չը զղջա-
ցայ ատոր վրայ: Աս ինձ բարի ու հաւա-
տարիմ ընկերուհի դարձաւ և խանութին
երկարատեւ բարգաւաճմանը շատ օգտեց:
Եւք երջանիկ էինք միմեանց հետ և հա-
ւասար եռանդով կաշխատէինք, որ մեր
բաղդը պահպանուի, քանի գնայ պերճա-
նայ ու յաւէտ անպակաս մնայ»,:

Աւերջապէս Ֆրանկլին հանգիստ առաւ
և հաստա այն կէտին, որ տեղէն որ իր

հոգոյ հարուստ գանձերը աւելի առա-
տօրէն կարող էր սփռիլ, քան թէ մինչև
այժմ:

(Նորոշակէն)

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՓՈՔԲ ԱՍԻԱՅԻ ԵՒ ԱՐԵՒԵԼԱՀԻՒՍԻՍԱՅԻՆ
ԱՓԲԻԿԵՒ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐԸ:

«Ուղիւ պրիթանիկ» Ֆրանսիական ամ-
սագրում տպուած էր «Արեւելեան Վրիս-
տոնեաներ» (1 է կրետիէն դ'օրիան) վեր-
նագրով մի յօդուած, որ հանած է Անգ-
ղիական Առաւելի Ռեւիյո: Յօդուածից
երեւում է որ հեղինակը քաջ տեղեակ է
այդ հարցին, թէպէտ յօդուածի մէջ հա-
ւանցի հայեացքներ և կծողական խօսքեր
կան, սակայն իրաւունք չունինք կասկա-
ծելու, որ հեղինակը չարամտութեամբ և
կամայլ նպատակով է աղջատել փաստե-
րը: Հեղինակը իւր ուշադրութիւնը դարձ-
րիւ է գլխաւորապէս այդ քրիստոնեանե-
րի բարոյական կեանքին, մի կողմը թող-
նելով միանգամայն նոցա դաւանութեանց
և խոստովանութեանց մէջ եղած զանա-
զանութիւնը:

Իւր յօդուածի նիւթը աշխարհագրա-
կան սահմանի մէջ շրջափակելով հեղի-
նակը այդ սահմանից դուրս է թողել
Հնդկաստանը, Պարսկաստանը, Չինաս-
տանը և Ասիայի Ռուսաստանը. այլ միայն
առնում է Ասիական Տաճկաստանի, փոքր
Ասիայի և Ագիպտոսի արեւելեան Վրիս-
տոնեաներին, որոնց համար սահման է
դնում արեւելքում Պարսկաստանը, հիւ-

սիսում Ռուսաստանը, արևելքում Միջ-
երկրական ծովը, իսկ հարավում Ափրի-
կէի անձանթ երկրները: Աւերոյիշեալ
սահմաններին մէջ եղեալ արևելեան քը-
րիստոնեաներին հետագայ կարգերի է բա-
ժանում:

Առաջին տեղը բռնում են մի բնութիւն
դուանդները. Աւտիքեանները և Վադ-
կեդոնի ժողովը չընդունող քրիստոնեա-
ները: Այսպէս կոչվում են այն քրիստո-
նեաները, որոնք ատում են սաստիկ Յոյ-
ներին, Յունաց քահանայապետութիւնը
և առհասարակ բոլոր յունականութիւ-
նը. այդ քրիստոնեաները ատում են նոյն-
պէս և արևմտեան կաթոլիկներին և բո-
ղոքականներին, թէպէտ աւելի սակաւ
քան թէ Յոյներին. նոցա համար ատելի
են նոյնպէս Մահմետականները, բայց ա-
ռաւել սակաւ, քան թէ իւրեանց քրիս-
տոնեայ եղբարքը: Այս դասին պատկա-
նում են Վալտինները, Հայերը, *) Հա-
բէշները և Ասորիները: Վալտինների բնա-
կութեան գլխաւոր տեղը Ազիպտոս է,
թէպէտ կան և Ասորեստանի միջ. Հա-
բէշները բնակում են Հաբէշտանում
կամ Աթովպիայում. Հայերը տարա-
ծուած են բոլոր փոքր Ասիայում, Անա-
տոլում և Տաւրոսի վրայ. Հայերը բազ-
մաթիւ են նոյնպէս գլխաւոր քաղաքնե-
րում և վաճառականութեան կեդրոննե-

րում. Ասորիները բնակում են բուն Ասո-
րեստանում մանաւանդ Վամասկոսից դէպ
ի հիւսիս: Այս չորս ազգերը ատում են
ոչ միայն այլադաւան քրիստոնեաներին և
Մահմետականներին, այլ և միմեանց:

Արևելքի քրիստոնեաների միւս դասը
կազմում են Նեստորականները: Սոքա ևս
ամենից շատ ատում են Յոյներին, թէ-
պէտ պակաս չեն ատում նոյնպէս Մահ-
մետականներին և արևմտեան քրիստո-
նեաներին: Սոքա մակաբաժանում չունին
— բոլորեքեան Նեստորականներ կամ
Վաղգէացիներ են. առաջին անունը մեծ
մասամբ տալիս են Վուրդստանի բնակիչ-
ներին. իսկ երկրորդը նոցա միադաւան
եղբարցը, որոնք Տիգրիս և Ափրատ գե-
տերի հովիտներում են բնակում: Նես-
տորականների սակաւաթիւ մասը բնա-
կում է և Ասորեստանում:

Երրորդ դասը կազմում են ուղղափառ
կոչեցեալ Յունական եկեղեցուն պատկա-
նեալ քրիստոնեաները: Սոքա ունեցած ա-
տելութիւնը դէպի վերոյիշեալ ազգերը ոչ
միայն համապատասխանում է նոցա ատե-
լութեանը, այլ և առաւել ևս է: Հեղի-
նակը այս դասը երկուսի է մակաբաժա-
նում — Յոյն Գառաբէթիւք և Յոյն Ռո-
ֆիւէթ: Առաջինները ցրուած են փոքր Ա-
սիայում, գլխաւորապէս Անատոլիայի ա-
րևմտեան մասում և կղզիների վերայ, իսկ
երկրորդները, որոնք սակաւաթիւ են,
բնակվում են Անատոլիայի արևելեան մա-
սում Ռուսաց սահմանների մօտ:

Չորրորդ դասը կազմում են արևելքի
այն քրիստոնեաները, որոնք իւրեանց ազ-
գային ծէսերը և արարողութիւնները պա-
հելով իւրեանց գլուխ ընդունում են պա-

(*) Սոյն յօդուածը գրող օտարազգիին (կամայ
կամ ակամայ) տգիտութիւնը մեր եկեղեցւոյ վար-
դապետութեանց և Ազգ. պատմութեան վերայ
անշուշտ առիթ տուած է այսպիսի ծուռ և սխալ
տեղեկութիւն տալու և միանգամայն զմեզ եւտի-
քեան կամ եւտիքական զրպարտելոյ:

պին: Սոքա երբեմն կոչվում են Աւերթոռ-
ներ կամ Մեղեխներ: Սոքա հինգ մա-
կաբաժանում ունին և են Յոյն, Հայ, Ա-
սորի, Վաղղէացի և Վալտի: Այս մակա-
բաժանումներից իւրաքանչիւրը իւրեանց
չկաթողիկ ազգակիցների հետ են բնա-
կում և սաստիկ ատում նոցա, Մահմե-
տականներին և հռովմական Աթոլիկ-
ներին, թէպէտ այս վերջիններին առա-
ջինների չափ չեն ատում:

Հինգերորդ դասը կազմում են Ախրա-
նանու մարօնիաները, որոնց գաղթականու-
թիւնները ատրածուած են Ասորեստա-
նում և Աղիպոսում: Արեւելեան քրիս-
տոնեաներից—հռովմական Աթոլիկնե-
րը իւրեանց դաւանութեամբ և մասամբ
արարողութեամբ ամենից շատ են համա-
կրութիւն ցոյց տալիս արեւմտեան քրիս-
տոնեաներին, բայց մնացեալ բոլոր դաւա-
նութիւններին դոքա ևս ատում են:

Արեւելքի քրիստոնեաների վեցերորդ
դասը կազմում են Կէղական բնակիչները,
որոնք լիովին ընդունել են հռովմական
եկեղեցու դաւանութիւնները և արա-
բողութիւնները: Սոքա առաւել բազմա-
թիւ են Ալպրոսում և Պաղէստինում: Բայց
պէտք է ասել, որ նոքա ցրուած են
ամեն տեղ, ուր որ Արանչիսկեան կրօնաւոր-
ները նոցա ողորմութիւն են տալիս: Ահա
այս հռովմական կաթողիկները են, որ իւ-
րեանց վաճառում են մի կտոր հացի հա-
մար, նոքա իւրեանց ազգի պարիսաները են:

Այսպէս ահա Արեւելեան քրիստոնեա-
ները 14 մակաբաժանում ունին, որոնք
բոլորեքեան ատում են միմեանց: Ախրո-
շիշեալ թուով բաւականանալով հեղե-
նակը առաջ չէ տանում իւր հարազա-

տութիւնը և ոչ ինչ չէ ասում մնացեալ
ազգութիւնների և հետաքրքիր աղանդ-
ների մասին, որոնց կրօնի հիմունքը միայն
քրիստոնէական է, այն ինչ քրիստոնէու-
թեան հետ շատ չնչին զրէթէ և ոչ ինչ
կապ չունի. թէպէտ և Մահմետական
կրօնից ևս զանազանվում է: Այդ աղանդ-
ները դաւանողները են—Աղդէնէրը Միջա-
գէտքում: Առանձին էրը հիւսիսային Ասորես-
տանում և Սաբէթէնէրը Վաղղիոյ մէջ: Այդ
աղանդաւորներէ կեանքը և գաղափարնե-
րը շատ հետաքրքիր են և ուսումնակա-
նաց ուշադրութեան արժանի. բայց հեղե-
նակը իւր յօդուածի շրջանից դուրս հա-
մարելով նոցա, միանգամայն լուռ է
մնում:

"Արարատի" սակաւաթերթ լինելը թոյլ
չէ աւալ մեզ լիովին թարգմանելու յօդուա-
ծը, ուստի վերոյիշեալ ազգերից կամե-
նում ենք առաջ բերել այս տեղ հեղե-
նակի կարծիքը բացի Հայերի մասին, նոյն-
պէս և Յոյների, ըստ որում այդ ազգու-
թիւններից Յոյները ամենահին ժամանակ-
ներից հետէ նշանաւոր են եղած և սերտ
յարաբերութիւններ ունեցել Հայերի
հետ և այժմ ևս Յոյները Տաճկաստանի
քրիստոնեաների մէջ առաջին տեղը են
բռնում: Հեղինակը Յոյների մասին
իւր խօսքը սկսում է այսպէս. Չկայ մի
անուն, որ Յոյների անուան նման հետա-
քրքրութիւն պատճառէ և յոյսեր տայ:
Յոյների այդպէս ընդհանրականութիւն
ստանալու պատճառները երեք են: Առա-
ջին, որ նոքա իւրեանց համարում են այն
ազգի սերունդը, որին մենք պարտական ենք
զլիսաւորապէս մեր լուսաւորութեամբ,
զրականութեամբ և արուեստներով:

Երկրորդ նոցա կրօնը: Եւ երրորդ այն ենթադրութիւնը որ կարծում են թէ արեւելքի քրիստոնեաների մէջ լուսաւորութիւն տարածուելու ժամանակ Յոյները մեծ դեր են խաղալու: Եյս երեք պատճառի առաջինը արեւմուտքի ազգերի մէջ մանաւանդ Ենգղիայում, դէպ այդ ազգը մեծ համակրութիւն ծնեցուց. Երկրորդի պատճառով նոցա կողմը պահում է Ռուսաստանը և մասամբ Ֆրանսիան:

Իսկ երրորդ պատճառով նոքա զբաւեցին բոլոր Եւրոպայի համակրութիւնը: Իայց հեղինակը Տրապիզոնում, Վամասկոսում և Եղէքսանդրիայում լաւ ծանօթանալով նոցա հետ և քննելով նոցա կեանքը շատ կողմեր դտաւ, որոնք ոչնչացրին միանգամայն Եւրոպայում ունեցած իւր յոյսերը: Պէտք չէ մոռանալ որ հեղինակի խօսքը Յունաց թագաւորութեան մէջ եղած Յոյների մասին չէ:

Եփիական Տաճկաստանում Յոյն հասարակութեան մէջ ծագման և դասերի զանազանութիւն չկայ: Հասարակութեան բարձր դասին պատկանեալ միակ իրաւունքը փողը է. հոգեւորականները իհարկէ առանձին դաս են կազմում և իւրեանց քահանայապետը ունին: Մտնենք մի Յոյնի բնակարանը, ասում է հեղինակը, և նկարագրենք: Եթէ կամենաք մեր նկարագրութեան համար վեր առնենք մի հարուստ Յոյնի բնակարան, ղիցուք թէ այդ Յոյնի անունը Վեմետրիոս Եղատսպուլ է: Ետրա տունը ֆրանսիական ճարտարապետութեամբ է շինած, իւր արտաքին մաքրութեամբ փոքր ինչ զանազանվում է չայի կամ Մահմետականի տնից: Տանը մօտ դանվում է մի փոքրիկ պարտէզ:

Երկար ժամանակ զանգը քաշելուց յետոյ, մեր առաջ բացեց դուռը բոկոտը, բաւականին անմաքուր հազնուած մի աղախին: Փոքր ինչ տարակուսելուց յետոյնա յայտնեց իւր տիրոջը որ սխօլիֆրանկօն (Եւրոպացի շուն) կամենում է տեսնել: Եյդ բառը վերաւորիչ չէ, այդպէս կոչում են նոքա բոլոր Եւրոպացիներին, բացի Ռուսներին, որոնց իսկական անունը են տալիս: Մեզ տարան մի դահլիճ, որի կէսը եւրոպական և կէսը արեւելեան ձևով էր զարդարուած, բայց ոչ եւրոպական և ոչ արեւելեան յարմարութիւնները ունէր: Պատերի վերայ կախած էին Ղէորդ թագաւորի, Աոստանդնուպօլսի հանգուցեալ պատրիարքի և Տաճկա-Յունական պատերազմում նահատակներին մինի անձոռնի նկարուած պատկերները: Պատերի մնացեալ մասերի վերայ կախած էին Փարիզի զէս բարքից վերառած վիմադրոշմ պատկերներ: Տանտիրոջ և ներկայ եղող անձանց հետ ողջունելուց յետոյ մենք նստանք բազմոցի վերայ և խօսակցութիւնը սկսեցաւ: Հարուստ Յոյնի խօսակցութեան միակ առարկան քաղաքականութիւնը է, իսկ նորա կարծիքով Ա. Պօլսը ապագայ Յունական կայսերութեան աթոռանիստը է լինելու անպատճառ: Վէց կամ եօթ ժամ նա զբաղած է իւր անձնական գործերով և ընտանեաց գործերով, անցնելով իւր ժամանակը կիսով չափ տանը ընտանեաց հետ և կիսով չափ խանութում: Մնացեալ հինգ ժամը անցնում է նա կլուբում օրէն երկու անգամ առաւօտեան և ցերեկին:

(Մնացել է յետագայում)